«Հավելված N 3»
ՀՀ կառավարության 2006 թվականի
նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշման

# Հ Ա Յ Տ

## Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների

| | |
|---|---|
| **Ծրագրի անվանումը** | *Ջերմուկ համայնքի «Ջապրիկ» մանկապարտեզ ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի Ձախափնյա թաղամասի մանկաշենքի ձմեռային այգու, Կեչուտ գյուղի մանկաշենքի երկու հարկերի, տանիքի և «Գնդեվազ համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի մանկաշենքի տանիքի հիմնանորոգում* |
| **Մարզ** | *Վայոց ձոր* |
| **Համայնքը /համայնք-ները** | *Ջերմուկ համայնք /ք. Ջերմուկ, գ. Կեչուտ, գ. Գնդեվազ, գ. Հերհեր և գ. Կարմրաշեն/* |
| **Համայնքի /բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև մարզկենտրոնից** | *Ջերմուկ քաղաքի և Կեչուտ գյուղի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից 175 կմ, մարզկենտրոն Եղեգնաձորից՝ 50 կմ, Գնդեվազ գյուղի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից՝ 163 կմ, մարզկենտրոն Եղեգնաձորից՝ 35 կմ,* |
| **Համայնքի /բնակավայրի բնակչությունը** | *Ջերմուկ համայնք 9276, Ջերմուկ քաղաք՝ 6388 մարդ, Կեչուտ գյուղ՝ 1121, Գնդեվազ գյուղ՝ 854 մարդ։* |
| **Սահմանամերձ, բարձր լեռնային համայնք /բնա-կավայրի** | *Ջերմուկ համայնքը և նրանում ընդգրկված բնակավայրերը սահմանամերձ չեն, սակայն Ջերմուկ քաղաքը և Կեչուտ գյուղն ընդգրկված են ՀՀ կառավարության 1998 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 756 որոշմամբ հաստատված ՀՀ բարձր լեռնային բնակավայրերի ցանկում, իսկ Գնդեվազ գյուղը՝ նույն որոշմամբ հաստատված ՀՀ լեռնային բնակավայրերի ցանկում* |
| **Համայնքի բնակավայրի ենթակառուցվածքների վերաբերյալ հակիճ տեղեկատվություն** | |

| Հ/Հ | Բնակավայրը | Ջրամատակարարում | Ջրահեռացման համակարգին միացած տն. տնտես. %-ը, | էլ. էներգիա սպառող բաժ թիվը | գազասպառման բաժ. թիվը | ոռոգում/ հա | փողոցային լուսավորություն |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | ք. Ջերմուկ | շուրջօրյա կենտրոնացված ջրամատակարարում, սպասարկողը՝ Վեոլիաջուր | 97 | 2001 | 1835 | 5 | առկա է |
| 2 | գ. Կեչուտ | շուրջօրյա կենտրոնացված ջրամատակարարում, սպասարկողը՝ համայնք | 100 | 240 | 240 | 395 | առկա է |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 3 | գ. Գողեվազ | շուրջօրյա ջրամատակարարում, սեփական համակարգ, սպասարկողը՝ համայնք | 90 | 199 | 189 | 161.8 | առկա է |
| 4 | գ. Հերհեր | շուրջօրյա կենտրոնացված ջրամատակարարում, սպասարկողը՝ համայնք | 0 | 186 | 15 | 90.7 | առկա է |
| 5 | գ. Կարմրաշեն | շուրջօրյա ջրամատակարարում, սեփական համակարգ, սպասարկողը՝ համայնք | 30 | 107 | 0 | 18.2 | առկա չէ |

**Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը**

*Ջերմուկ քաղաքի մանկապարտեզը գործում է ք. Ջերմուկ, Զախափնյակ 2/3 /Զախափնյա թաղամասի մասնաշենք/ և գ. Կեչուտ, 8-րդ փողոց շենք 3 / Կեչուտի մասնաշենք/, իսկ Գողեվազ գյուղի մանկապարտեզը՝ 8-րդ փողոց, 1-ին փկղ. թիվ 3 հասցեներում: Մանկապարտեզ հաճախում է 181 երեխա /ք. Ջերմուկ՝ 134, գ. Կեչուտ՝ 24, գ. Գողեվազ՝ 23/: Զախափնյակ թաղամասի շենքի մի մասը հիմնանորոգվել է 2009թ.-ին, իսկ 2013թ.-ին մեկ այլ հատվածի վերանորոգումից հետո ավելացվել է ևս երկու խումբ: Ձմեռային այգու տանիքը և պատուհանները ևս վերանորոգվել են, սակայն 226 քմ մակերեսով տարածքը չի բարեկարգվել կամ վերանորոգվել, արդյունքում դեֆորմացվել են պատուհանները, սկսել է քայքայվել տանիքը: Կեչուտի շենքի վերանորոգվել է 2006-2007թթ-ին, իսկ Գողեվազի մանկապարտեզը՝ 2011թ.-ին:*

*Նախատեսվում է*

*- բարեկարգել Զախափնյա թաղամասի մասնաշենքի ձմեռային այգին՝ վերանորոգել տանիքի վնասված հատվածները, անցկացնել արհեստական լուսավորություն և էլեկտրական ջեռուցման համակարգ, կառուցել ավազային խաղահրապարակ, տեղադրել խաղ-ատրակցիոններ, երեխաների հետ տարվող ուսումնական գործընթացի ընթացքում տնկել դեկորատիվ բույսեր և ծառեր, խնամել էնդեմիկ թռչուններ և կենդանիներ:*

*- հիմնանորոգել Կեչուտի մասնաշենքի տանիքը՝ նախատեսելով հետագայում արևային մարտկոցների և ջրատաքացուցիչների տեղադրման հնարավորությունը, հիմնանորոգել մասնաշենքի 2-րդ հարկը, անցկացնել արհեստական լուսավորություն, օդափոխության և ջեռուցման համակարգեր, վերանորոգել 1-ին հարկը՝ տարածքը համապատասխանեցնելով գործող նորմերին ու կանոններին, կառուցել 2-րդ հարկ բարձրացող նոր աստիճանավանդակ:*

*- հիմնանորոգել Գողեվազի մասնաշենքի տանիքը՝ նախատեսելով հետագայում արևային մարտկոցների և ջրատաքացուցիչների տեղադրման հնարավորությունը:*

*Այդպիսով ապահովել շենքերի պահպանումը հետագա վնասումից, մանկապարտեզ հաճախող երեխաների համար ստեղծել ավելի բարենպաստ պայմաններ, ինչպես նաև համայնքի տարածքում ստեղծել նախադպրոցական ներառական կրթության համար անհրաժեշտ պայմաններ՝ նպաստելով համայնքի տարածքում հավասար ներառական կրթության ապահովմանը և*

| | |
|---|---|
| | *հասարակության մեջ հաշմանդամություն ունեցող երեխաների ներգրավվածության ապահովմանը, այդպիսով՝ ներառական կրթությունը համայնքում դարձնել ավելի մատչելի և հասանելի հաշմանդամություն ունեցող երեխաների համար:* |
| **Ծրագրի ակնկալվող արդյունքները, որոնց միջոցով պետք է հասնել ծրագրի իրականացման նպատակին** | *Մանկապարտեզների տանիքների և շենքերի վերանորոգումը համայնքի հրատապ խնդիրներից են, որոնք, որպես ոլորտային առանձին ծրագրեր, ընդգրկված են համայնքի 2017-2021 թվականների զարգացման ծրագրում:*<br>*Ծրագրի իրագործման արդյունքում կունենանք*<br>*- Չախափնյա թաղամասի մանկապարտեզի 226 քմ մակերեսով բարեկարգ ձմեռային այգի՝ մասնակի վերանորոգված տանիքով, արհեստական լուսավորություն և էլեկտրական ջեռուցման համակարգ, ավազային խաղահրապարակ, խաղ-ատրակցիոններ:*<br>*- Կեչուտի մանկապարտեզի 200քմ մակերեսով հիմնանորոգված տանիք, մուտ 200քմ մակերեսով 2-րդ հարկ՝ էներգամատակարարման, օդափոխության և ջեռուցման համակարգեր, 2-րդ հարկ բարձրացող նոր աստիճանավանդակ, գործող սանիտարական և շինարարական նորմերին ու կանոններին համապատասխան վերանորոգված մուտ 200քմ մակերեսով 1-ին հարկ:*<br>*- Գնդեվազի մանկապարտեզի 297.5քմ մակերեսով հիմնանորոգված տանիք, որը կհամապատասխանի անվտանգության չափանիշներին:* |
| **Ծրագրի արդյունքներին հասնելու գործողությունները և միջոցառումները** | *Նախատեսվում է*<br>*-գնումներ գործընթացի կազմակերպում,*<br>*-արդյունքների ամփոփում, պայմանագրի կնքում,*<br>*-աշխատանքների իրականացում, արդյունքների ընդունում և վերահսկողություն:*<br>*Շինարարական աշխատանքների արդյունքում*<br>*- Չախափնյա թաղամասի մանկապարտեզի կկառուցվի 226 քմ մակերեսով ձմեռային այգի, մասնակի /100քմ/ կվերանորոգվի տանիքը, կանցկացվի արհեստական լուսավորություն և էլեկտրական ջեռուցման համակարգ, ավազային խաղահրապարակ, խաղ-ատրակցիոններ;*<br>*- Կեչուտի մանկապարտեզի 1-ին հարկում նախադպրոցական 1 խմբի համար կկառուցվի միջանցք, խաղասենյակ՝ 50քմ, ննջարան՝ 50քմ, սանհանգույց՝ 9քմ, հանդերձարան՝ 10քմ, խոհանոց՝ 25քմ, ամաններ լվանալու սենյակ՝ 4քմ և բժշկական սենյակ՝ 6քմ համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 20-ի «Նախադպրոցական կազմակերպությունների (հիմնարկների)» N 2.III.1 սանիտարական նորմերը և կանոնները հաստատելու մասին թիվ 857 հրամանի պահանջների: 2-րդ հարկում նախադպրոցական ևս 1 խմբի համար կկառուցվի միջանցք, խաղասենյակ՝ 50քմ, ննջարան՝ 50քմ, սանհանգույց՝ 9քմ, հանդերձարան՝ 10քմ, ամաններ լվանալու սենյակ՝ 4քմ և ազատ տարածք ըստ հայեցողության՝ մուտ 50քմ: Կհիմնանորոգվի մուտ 200քմ մակերեսով տանիքը՝ հաշվի առնելով հետագայում տանիքին արևային մարտկոցների և ջրատաքացուցիչների տեղադրման հնարավորությունը, ջրհորդան խողովակների և ձագարների տեղադրում, լանջավոր տանիքի իրականացում 0.5մմ հաստությամբ գունավոր ցինկապատ կղմինդրով, օդահան հորանների թասակների տեղադրում:* |
| **Ծրագրի իրականացման արդյունքում համայնքին սեփականության իրավունքով պատկանող** | *Ջերմուկ քաղաքի Չախափնյակ 2/3, գ. Կեչուտ, 8-րդ փողոց շենք 3 և գ. Գնդեվազ 8-րդ փողոց, 1-ին փկղ. թիվ 3 հասցեներում գտնվող շինությունները սեփականության իրավունքով պատկանում են Ջերմուկ համայնքին:*<br>*Ծրագրի իրագործման արդյունքում շենքի արժեքը կավելանա, քանի որ դրանով* |

| | |
|---|---|
| **հիմնական միջոցների արժեքի ավելացում** | *նախատեսվող ծախսերը կապիտալ բնույթի են:* |
| **Ծրագրի ազդեցությունը համայնքի և շահառուների վրա** | *Ծրագրի ուղղակի շահառուներն են մանկապարտեզ հաճախող Ջերմուկ համայնքի 183 երեխաներ և 44 աշխատակիցներ:*<br>*Ծրագրի իրագործման արդյունքում շենքի արժեքը կավելանա, համայնքի տարածքում կապահովվի նախադպրոցական ներառական կրթության մատուցումը և կբարձրանա մատուցվող նախադպրոցական կրթության որակը: Միաժամանակ կապահովվի ևս 25 երեխաների համար նախադպրոցական կրթության հնարավորություն:* |
| **Ծրագրի իրականացման ընթացքում և արդյունքում ստեղծվող աշխատատեղեր** | *Ծրագրի իրականացման ընթացքում կստեղծվեն 28-30 ժամանակավոր, և 2-3 հիմնական աշխատատեղեր: Մասնավոր հատվածից աշխատատեղեր չեն նախատեսվում: Ծրագրի իրականացման արդյունքում 4 հիմնական աշխատատեղերը նախատեսվում են Ջերմուկի համայնքապետարանի կողմից /1 դաստիարակ, 1 դաստիարակի օգնական, 1 հոգեբան և 1 հավաքարար/:* |
| **Համայնքի նախորդ տարվա բյուջեն և բյուջեի կատարողականը** | *Նախորդ տարվա բյուջեն՝ 710716300 դրամ* |

| | *Պլանը /հազ. դրամ/* | *Փաստացին /հազ. դրամ/* | *Տոկոսը* |
|---|---|---|---|
| ***Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտները*** *այդ թվում՝* | 456921.36 | 499767.52 | 109.38 |
| *-Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝* | 456374.37 | 454117.68 | 99.51 |
| *- Սեփական եկամուտներ* | 351607.97 | 348931.68 | 99.24 |
| *-Ֆոնդային բյուջեի եկամուտներ* | 546.98 | 41114.85 | 7516.69 |
| ***Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր,*** *որից՝* | 710716.30 | 506496.11 | 71.27 |
| *- Վարչական բյուջեի ծախսեր* | 460664.30 | 448295.22 | 97.31 |
| *-Ֆոնդային բյուջեի ծախսեր* | 250052.00 | 58200.90 | 23.28 |
| ***Համայնքի ֆոնդային բյուջեի փաստացի ծախսերը,*** *որից՝* | 250052.00 | 58200.90 | 23.28 |
| *- ճանապարհաշինություն* | 2900.00 | 2818.02 | 97.2 |
| *- ջրամատակարարում* | 1000.00 | 976.64 | 97.6 |
| *- փողոցային լուսավորություն* | 18000.00 | 16901.22 | 93.9 |
| *- գյուղատնտեսություն* | 200.00 | 150.00 | 75 |

*2018թ. բյուջեի ֆոնդային մասի ծախսերի բացվածքը*

| *Հիմնարկ/Ծախսատեսակ* | *Տարվա պլան (դրամ)* | *կատարողականը ճանաչման պեսքով (դրամ)* |
|---|---|---|
| *նախադպրոցական կրթություն* | 18000000 | 0 |
| *Ջերմուկի համայնքի ճոպանուղի վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրման* | 53000000 | 3002520 |

| | | |
|---|---|---|
| ծառայություն | | |
| քաղաքապետարանի հիմնարկի պահպանման ծախսեր) | 25957300 | 1578500 |
| ասֆալտբետոնյա ծածկի վերանորոգում և պահպանում | 2500000 | 998400 |
| նախադպրոցական կրթություն | 2500000 | 2388900 |
| բնակարանային շինարարություն | 27719700 | 1318350 |
| Ջերմուկի կենտրոնական գրադարան հիմնարկի պահպանման ծախսեր | 18200000 | 697000 |
| աղբահանություն և սանիտարական մաքրում | 34675000 | 32560000 |
| համայնքների զարգացում | 14440000 | 382525 |
| փրկարար ծառայություն | 15000000 | 3000700 |
| ճանապարհային տրանսպորտ | 24000000 | 0 |
| ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 560000 | 560000 |
| նախագծային աշխատանքներ | 11000000 | 10970000 |
| զբոսաշրջության զարգացում | 2500000 | 744000 |
| ԸՆԴԱՄԵՆԸ՝ | 250052000 | 58200895 |

**Համայնքի ընթացիկ տարվա բյուջեն**

*Ջերմուկ համայնքի ընթացիկ տարվա բյուջեն կազմում է 740000000 դրամ.*

| | Պլանը /հազ. դրամ |
|---|---|
| **Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտների պլանավորում** այդ թվում՝ | 492933.54 |
| - Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝ | 487887.50 |
| - սեփական եկամուտներ | 384601.80 |
| - Ֆոնդային բյուջեի եկամուտներ | 5046.04 |
| **Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր,** որից՝ | 740000.00 |
| - Վարչական բյուջեի ծախսեր | 498000.00 |
| -Ֆոնդային բյուջեի ծախսեր | 242000.00 |

*2019 թվականի բյուջեի ֆոնդային մասի պլանավորված ծախսերն առանձին բացվածքով:*

| **Համայնքի ֆոնդային բյուջեի պլանավորված ծախսերը /հազար դրամ, որից՝** | 242000 |
|---|---|
| **Ոլորտ 1. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ 26775.0** | |
| **Ծրագիր 4** Բնակչությանը մատուցվող ծառայությունների արդիականացում | **Գումար** |
| **Միջոցառում** | |
| Ջերմուկ կենտրոնի վարչական շենքի հիմնանորոգում | 16800.0 |
| Կեչուտ բնակավայրի գրասենյակի հիմնանորոգում և կահավորում | 1050.0 |

| | |
|---|---|
| Գնդեվազ բնակավայրի գրասենյակի հիմնանորոգում և կահավորում | 1050.0 |
| Հերհեր բնակավայրի վարչական շենքի հիմնանորոգում և կահավորում | 5775.0 |
| Կարմրաշեն բնակավայրի գրասենյակի հիմնանորոգում և կահավորում | 2100.0 |
| **Ոլորտ 3. Հասարակական կարգ, անվտանգություն և դատական Գործունեություն** 2600.0 | |
| **Ծրագիր 2.Փրկարար ծառայություն** | **Գումար** |
| **Միջոցառում** | |
| Համայնում բնական աղետներից բնակչության կրած վնասների հիմնանորոգում | 2600.0 |
| **Ոլորտ 4. Տնտեսական հարաբերություններ** 88788.0 | |
| **Ծրագիր 4 Համայնքի բնակավայրերի գազաֆիկացում** | **Գումար** |
| **Միջոցառում** | |
| Ջերմուկ քաղաքային բնակավայրի գազաֆիկացում | 500.0 |
| Կեչուտ գյուղական բնակավայրի գազաֆիկացում | 1600.0 |
| Գնդեվազ գյուղական բնակավայրի գազաֆիկացում | 1800.0 |
| Հերհեր գյուղական բնակավայրի գազաֆիկացում՝ ներառյալ նախագծանախահաշվային փաստաթղթեր | 27175.5 |
| **Ծրագիր 5 ճանապարհային տրանսպորտ** | **Գումար** |
| **Միջոցառում** | |
| ,,Խնկացի կանգառներ,,-ի կառուցում՝ ներառյալ նախագծանախահաշվային փաստաթղթեր | 10000.0 |
| Համայնքի ներհամայնքային ճանապարհների վերանորոգում, կառուցում՝ ներառյալ նախագծանախահաշվային փաստաթղթեր | 4392.5 |
| **Ծրագիր 6 խողովակաշարային տրանսպորտ** | **Գումար** |
| **Միջոցառում** | |
| Համայնքի ենթակառուցվածքների՝ գլխավոր ճոպանի հիմնանորոգումը, ներառյալ նախագծանախահաշվային փաստաթղթեր | 18000.0 |
| **Ծրագիր 7 Զբոսաշրջություն** | **Գումար** |
| **Միջոցառում** | |
| Համայնքի զբոսաշրջային ենթակառուցվածքների՝ ըմպելասրահի հիմնանորոգում, ներառյալ նախագծանախահաշվային փաստաթղթեր | 25320.0 |
| **Ոլորտ 5. Շրջակա միջավայրի պաշտպանություն** 7834.0 | |
| **Ծրագիր 2 Կեղտաջրերի հեռացում** | **Գումար** |
| **Միջոցառում** | |
| Համայնքի շրջակա միջավայրի պահպանում՝ ցերեզմանապատում, | 6834.0 |
| Համայնքի ջրահեռացման համակարգի վերանորոգում | 1000.0 |
| **Ոլորտ 6. Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ** 27250.0 | |
| **Ծրագիր 02. Համայնքների զարգացում** | |
| **Միջոցառում** | |
| Համայնքում առկա բնակ. ֆոնդի վերանորոգում և պահպանում, բազմաբնակարան շենքերի սպասարկում, խաղահրապարակների կառուցում | 2250.0 |
| **Ծրագիր 03. փողոցների լուսավորում** | |
| **Միջոցառում** | |
| Գնդեվազ գյուղական բնակավայրի արտաքին լուսավորության ընդլայնված ցանցի կառուցում՝ ներառյալ նախագծանախահաշվային փաստաթղթեր | 4500.0 |
| Հերհեր գյուղական բնակավայրի արտաքին լուսավորության ընդլայնված ցանցի կառուցում՝ ներառյալ նախագծանախահաշվային փաստաթղթեր | 18000.0 |
| Կարմրաշեն գյուղական բնակավայրի արտաքին լուսավորության ընդլայնված ցանցի կառուցում՝ ներառյալ նախագծանախահաշվային փաստաթղթեր | 2500.0 |
| **Ոլորտ 8. Հանգիստ, մշակույթ և կրոն** | |

| | |
|---|---|
| 51253.0 | |
| Ծրագիր 02. Մշակույթային ծառայություններ | |
| Միջոցառում | |
| Համայնքային ենթակայության Ջերմուկ հանրային գրադարանի գրքային ֆոնդի համալրում | 1000.0 |
| Համայնքային մշակույթային կենտրոնում մարզասրահի կառուցում և կահավորում, շախմատի մարզադպրոցի վերանորոգում ծառայությունների արդիականացում՝ ներառյալ նախագծա-նախահաշվային փաստաթղթեր | 50253.0 |
| Ոլորտ 9. Կրթություն<br>37500.0 | |
| Ծրագիր 03. համայնքի նախադպրոցական կրթություն | |
| Միջոցառում | |
| Համայնքի ենթակայության մանկապարտեզներում կապիտալ վերանորոգման աշխատանքների իրականացում, հարմարավետ պայմանների ստեղծում | 37500.0 |

| | |
|---|---|
| **Համայնքի ընթացիկ տարվա բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի (ներառյալ ֆինանսական համահարթեցման դոտացիայի գծով կանխա-տեսվող մուտքերը) հաշվին նշված ծրագրի իրականացման անհնարինության հիմնավո-րումը (համապատասխան հաշվարկներով** | *Համայնքի բյուջեով նշված ծրագրի ամբողջական իրագործումն անհնար է, այս ոլորտին ուղղված համապատասխան ֆինանսական միջոցների սղության պատճառով համաձայն համայնքի բյուջեի ֆոնդային մասի «Ոլորտ 9. Կրթություն» բաժնի «Ծրագիր 03. Համայնքի նախադպրոցական կրթություն» մասի միջոցառման և 2019թ/-ի ՏԱՊ ֆինանսավորման պլանի /ներկայացվում է ստորև/:*<br>*Ոլորտ 8. Կրթություն*<br>*2. Ջերմուկ բնակավայրի «Զատիկ» մանկապարտեզ ՆՈՒՀ և «Գնդեվազ համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ներ, այդ թվում 37500.0*<br>*- Ջերմուկ բնակավայրի «Զատիկ» մանկապարտեզ ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի Ձախափնյակ թաղամասի մասնաշենքի ձմեռային այգու, Կեչուտ բնակավայրի մասնաշենքի 1-ին և 2-րդ հարկերի, «Գնդեվազ համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տանիքի հիմնանորոգում 25.35 մլն դրամ,*<br>*-անհրաժեշտ գույքի ձեռքբերում 12.15 մլն դրամ:*<br>*Ընդամենը 37.5 մլն դրամ* |
| **Ծրագրի ընդհանուր բյուջեն** | *70105550 դրամ (100%)* |
| **Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը** | *25350000 դրամ (36.1%)* |
| **Այլ ներդրողներ** | *Այլ ներդրողներ չկան:* |
| **Ծրագրի իրականացման տևողությունը** | *Սկիզբը՝ հուլիս 2019թ.* *Տևողությունը 4 ամիս* |
| **Ծրագրի ծախսերը** | *Նախագծանախահաշվային փաստաթղթերը գտնվում են մշակման փուլում:* |
| **Ամսաթիվ** | *6 մարտի 2019 թ.* |

**Համայնքի տնտեսական զարգացման հարցերով պատասխանատու՝ Ստեփանոս Վարդանյան**

**Հեռ.՝ 077.57.75.60, էլ.փոստ՝ Vardanyan.Stepan@mail.ru**

**Համայնքի ղեկավար՝** **Վարդան Հովհաննիսյան**